

Տեղական մակարդակով սոցիալական ազդեցություններ

Ներկա իրավիճակը

Ամուլսարի Ծրագրի տեղամասի շրջակայքում ապրող տեղական բնակչության թիվը շուրջ 6600 է:

Հայաստանի գյուղական վայրերում, այդ թվում՝ Ամուլսարի տարածքում, վերջին տարիների ընթացքում արձանագրվում է սոցիալական պատճառներով պայմանավորված արտագաղթ:



Հնարավոր ազդեցություններն ու խնդիրները

- Տեղացիների համար աշխատատեղերի ստեղծումը Ամուլսարում կարող է հանգեցնել ավանդական կենսակերպի փոփոխության:
- Ծրագրով պայմանավորված աշխատանքային (ուղղակի և անուղղակի) հնարավորությունները կարող են հանգեցնել ներգաղթի՝ մեծացնելով որոշ համայնքների բնակչության թիվն ու ավելացնելով ծառայությունների և ապրանքների պահանջարկը: Սա կարող է առաջացնել որոշ սոցիալական մարտահրավերներ:
- Ծառայությունների և ապրանքների (այդ թվում՝ բնակարանների) նկատմամբ ավելացած պահանջարկը կարող է առաջացնել տեղայնացված սղաճ:



Հնարավոր ազդեցությունների և խնդիրների լուծմանն ուղղված Լիդիանի քայլերը

- Աշխատանքային առումով նախընտրությունը տալով տեղացիներին, Ծրագիրը նախատեսում է նվազեցնել արտաքին աշխատուժի ներհոսքը՝ միննույն ժամանակ զսպելով տեղացիների արտագաղթը:
- Լիդիանը պլանավորում է անցկացնել համայնքային զարգացման ծրագրեր, որոնք ուղղված են գյուղատնտեսական բնագավառի աջակցմանն ու փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:
- Ընկերությունը պատրաստվում է իրականացնել սղաճի ազդեցությունների մշտադիտարկում և վերահսկում, ինչպես նաև համագործակցել համայնքների ղեկավարների հետ բնակչության ավելացման պլանավորման նպատակով:



Որ ազդեցություններն ու խնդիրներն են լինելու երկարատև

- Անգամ վերոգրյալ միջոցառումների իրականացման պարագայում, ենթադրվում է տեղական գյուղական համայնքների ավանդական կենսակերպի փոփոխություն:
- Առկա է նաև որոշակի ներգաղթի հնարավորություն: